«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1, հեռ.՝ (+374-60) 71-01-31, ներքին՝ 11-31, էլհասցե՝ www.ysu.am, board@ysu.am

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի՝ 2023 թ. դեկտեմբերի 26-ին տեղի ունեցած թիվ 3 նիստի

ՀՀ, ք. Երևան
26.12.2023 թ.

2023 թվականի դեկտեմբերի 26-ին տեղի է ունեցել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 3-րդ նիստը, որին մասնակցել են «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ ՀՀ վարչապետի կողմից 2021 թ. հոկտեմբերի 28-ի թիվ 1222-Ա որոշմամբ հաստատված հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 20 անդամներից 18-ը (գրանցման թերթիկը կցվում է):

Ներկայացված օրակարգը՝
1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի՝ 2023 թվականի գործունեության և ռազմավարական ծրագրի կատարման տարեկան հաշվետվության լսում և գնահատում:
2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կառուցվածքի հաստատում:
3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2024 թվականի հաստիքացուցակի հաստատում:
4. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2024 թվականի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի (բյուջե) հաստատում:
5. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կողմից 100 միլիոն ՀՀ դրամի սահմանաչափը գերազանցող ԵՊՀ կարիքների լաբորատոր սարքերի ձեռքբերում ապրանքի մատակարարման թիվ ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/24-1, կապալային աշխատանքների կատարման թիվ ԵՊՀ-ԲՄԱՇՁԲ-23/1 և վերանորոգման աշխատանքների կատարման գնման թիվ ԵՊՀ-ՀԲՄԱՇՁԲ-23/2 պայմանագրերի հաստատում:

Մինչ օրակարգի հաստատմանն անցնելը Խորհրդի անդամ Գոռ Օհանյանն առաջարկեց օրակարգում ներառել նաև Իջևանի մասնաճյուղի տնօրենի թափուր պաշտոնի մրցույթի հայտարարման հարցը: Խորհրդի նախագահն առաջարկը դրեց քվեարկության:

Քվեարկության արդյունքները՝ **կողմ՝ 4, դեմ՝ 14, ձեռնպահ՝ 0:**
Առաջարկը չընդունվեց:

Այնուհետև նախապես ուղարկված օրակարգը Խորհրդի նախագահի առաջարկությամբ դրվեց քվեարկության: **Նիստի օրակարգը հաստատվեց միաձայն:**

1. **«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի՝ 2023 թվականի գործունեության և ռազմավարական ծրագրի կատարման տարեկան հաշվետվության լսում և գնահատում:**

ԵՊՀ ռեկտոր Հ. Հովհաննիսյանը ներկայացրեց հաշվետու տարում իրականացված աշխատանքները, ձեռքբերումներն ու գրանցած հաջողությունները: Մասնավորապես, հաշվետու տարում.

1. ֆակուլտետներում փորձարկվել է «նախապայման» համակարգը («prerequisite system»), որը բովանդակային փոփոխություն է կրթական համակարգում (օրինակ՝ եթե ուսանողը չի կարողացել ավարտել «Մաթեմատիկական անալիզ 1» դասընթացը, ապա չի կարողանա մասնակցել «Մաթեմատիկական անալիզ 2» դասընթացին),
2. ներդրվել են 4 բակալավրիատական և 2 մագիստրոսական կրթական ծրագրեր,
3. չնայած ՀՀ-ում ծրագրային հավատարմագրումը կամավոր է, սակայն ԵՊՀ 4 կրթական ծրագիր (Ֆարմացիայի ինստիտուտի և Կենսաբանության ֆակուլտետի երկուական կրթական ծրագրեր) միջազգային հավատարմագրման գործընթաց է անցել գերմանական «ASIIN» կազմակերպության կողմից: Նախատեսվում է շարունակել գործընթացն ու հավատարմագրել կրթական այլ ծրագրեր,
4. ԵՊՀ-ն 710 միլիոն ընդհանուր ֆոնդով 28 նոր դրամաշնորհ է շահել ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից հայտարարված տարբեր մրցույթների արդյունքում: Ընդ որում՝ շահած պետական ու միջազգային դրամաշնորհներով ԵՊՀ-ն առաջատար է ՀՀ կրթական համակարգում, տպագրված գիտական հոդվածների թվով՝ նույնպես, ավելին՝ առաջ է անցել նույնիսկ ԳԱԱ գիտահետազոտական ինստիտուտներից,
5. պետական և ԵՊՀ միջոցների հաշվին ձեռք է բերվել 1.2 միլիարդ դրամի չափով գիտական սարք և սարքավորում,
6. ԵՊՀ 21 գիտական պարբերական հասանելիություն է ստացել միջազգային գիտական հարթակներում,
7. «ERASMUS +» ծրագրով ԵՊՀ-ն շահել է 5 դրամաշնորհ,
8. հաշվետու տարում 680 դասախոս և ուսանող գործուղվել է արտերկիր, իսկ ԵՊՀ-ում դասախոսություն է կարդացել 70 հրավիրյալ պրոֆեսոր,
9. ԵՊՀ-ն կազմակերպել ու անցկացրել է 23 վերապատրաստում 120 քաղաքացիական ծառայողների համար,
10. ԵՊՀ բակում կազմակերպվել է «ԲանուԳործ» էքսպոն, որին մասնակցել է մոտ 60 գործատու, էքսպոն ունեցել է 20 000 այցելու,
11. հաշվետու տարում կնքվել և վերակնքվել է 22 միջազգային պայմանագիր,
12. վերանորոգվել է 27 լսարան, 3 լաբորատորիա, 18 աշխատասենյակ,
13. 10 տոկոսով բարձրացվել է բոլոր աշխատողների աշխատավարձը,
14. հաշվետու տարում 2 անգամ տրվել է պարգևատրում. դեկտեմբերին հիմնական աշխատավարձի չափով և օգոստոսին 50 տոկոսի չափով,
15. վերանայվել են կրթական ծրագրերը՝ հաշվի առնելով եվրոպական մոտեցումները,

16. տեղի է ունեցել Ֆիզիկայի և Ռադիոֆիզիկայի ֆակուլտետների վերակազմակերպում Ֆիզիկայի ինստիտուտի կազմում,
17. ներդրվել է պրակտիկաների կազմակերպման և վերահսկման էլեկտրոնային նոր գործիք, գործարկվել է Ռեգիստրար համակարգը, որի միջոցով հնարավորինս թվայնացվում է կրթական գործընթացը,
18. ԵՊՀ միջազգային ուսանողների թիվը հասել է 397-ի,
19. ԵՊՀ-ն սկսել է համագործակցել Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի հետ՝ ընդունելով այնտեղից ուսանողներ,
20. ընդունվել է Դասախոսների վերապատրաստման կարգը, շուտով կընդունվի նաև Ատեստավորման կարգը: Գործընթացների արդյունքում դասախոսների աշխատավարձը հնարավոր է բարձրացնել 20-40 տոկոսով,
21. դասախոսներին հնարավորություն է տրվել տարեկան 700 ժամ բեռնվածության 50 ժամը նախատեսել հետազոտական աշխատանքի համար,
22. բացվել է ԵՊՀ ՍԹԵՄ դպրոցը: «Իմ քայլը» հիմնադրամը 22 միլիոն դրամին համարժեք լաբորատոր սարքավորումներ է նվիրել ՍԹԵՄ դպրոցին,
23. տրվել է 100 միլիոն դրամ 10 ներքին դրամաշնորհի համար, որոնցից 2 դրամաշնորհը հատկացվել է կրթական ծրագրերի բարելավման ու վերանայման նպատակով, իսկ 3 դրամաշնորհ՝ արցախցիների բռնի տեղահանման պատճառով ի հայտ եկած հիմնախնդիրներին ու հարակից այլ թեմաներին առնչվող հետազոտություններ իրականացնելու համար,
24. ԵՊՀ-ն սահմանել է ճանապարհորդական դրամաշնորհներ 20 միլիոն դրամի չափով: Դրամաշնորհին կարող են դիմել ԵՊՀ հիմնական աշխատակիցները կամ ասպիրանտները, որոնք իրենց գիտական աշխատանքներում ԵՊՀ-ն նշում են որպես աշխատավայր՝ ցանկություն հայտնելով մասնակցել միջազգային սեմինարների, գիտաժողովների կամ իրենց հետազոտական ոլորտին առնչվող այլ միջոցառումների,
25. Համաշխարհային բանկի համաֆինանսավորմամբ Կրթական ծրագրերի կենտրոն-ԾԻԳ-ի աջակցությամբ իրականացվող «Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային ծրագրի շրջանակում ԵՊՀ-ն ստացել է 500 հազար դոլարի չափով դրամաշնորհ՝ «Օպտիկական միկրոհամակարգերի մշակում և հետազոտում» գիտակրթական կենտրոն ստեղծելու համար, որի վերանորոգումն իրականացնելու է ԵՊՀ-ն, իսկ սարք և սարքավորումները տրամադրելու է կենտրոնը,
26. ԵՊՀ-ն կազմակերպել է արհեստական բանականության թեմայով կոնֆերանս,
27. ԵՊՀ բոլոր ամսագրերը գրանցվում են «Ամսագրերի բաց համակարգում» (OJS), որտեղ տեղադրվում են գրախոսությունները,
28. հունվարից ԵՊՀ-ն ձեռք է բերելու միջազգային հեղինակավոր շտեմարաններում՝ «Brill», «JSTOR», «World Scientific» հասանելիության թույլտվություն,
29. ՀՀ կառավարության կողմից գնվող գերհամակարգիչը տեղադրվելու է ԵՊՀ-ում, որի գործարկման համար ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳ կոմիտեի աջակցությամբ ձևավորվել է խումբ՝ նպատակ ունենալով բարեփոխելու կրթագիտական միջավայրը,
30. բարեփոխման աշխատանքներ են իրականացվել թվային համակարգերի զարգացման ուղղությամբ՝ «registrar», «supervision», «e-learning», «e-request», գործարկվել է ԵՊՀ եռալեզու նոր կայքը,

31. ստեղծվել են ֆակուլտետային գրասենյակներ, որի համակազմի վերապատրաստման ու ատեստավորման արդյունքում իրականացվել է համակարգի բարեփոխում: Արդյունքում ուսումնաօժանդակ աշխատակազմի աշխատավարձերը բարձրացել են 45 տոկոսով,
32. ինստիտուցիոնալ հավատարմագրման խորհրդատվությունների հիման վրա՝ ամբողջ համալսարանում իրականացվել է ռազմավարական ծրագրին համահունչ պլանավորում, որն էլ հիմք է հանդիսացել 2024 թվականի բյուջեի պլանավորման համար,
33. «Իզմիրլյան» հիմնադրամի հետ համագործակցության արդյունքում ամբողջությամբ վերանորոգվել են ԵՊՀ գրադարանի երկու ընթերցասրահները, իսկ ընթերցասրահների աշխատանքային ժամերը երկարաձգվել են մինչև ժամը 21:00-ն,
34. ԵՊՀ Ծաղկաձորի և Բյուրականի ուսումնաարտադրական բազաներում իրականացվել են բարեկարգման աշխատանքներ,
35. ներառական միջավայրի ապահովման համար ԵՊՀ մասնաշենքերում տեղադրվել են թեքահարթակներ,
36. նախատեսված է գալիք տարում 30 սանհանգույցների վերանորոգում՝ հաշվի առնելով նաև ներառական միջավայր ապահովելու պահանջները,
37. գործատուների հետ համագործակցության արդյունքում ԵՊՀ տարբեր ֆակուլտետների ենթակառուցվածքներ բարելավվել են, օրինակ՝ «PMI Science»-ի աջակցությամբ ամբողջությամբ վերանորոգվել է Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի համակարգչային տարածքները,
38. գալիք տարում նախատեսվում է կազմակերպել ԵՊՀ շրջանավարտների մեծ ֆորում՝ նպատակ ունենալով ակտիվացնելու ԵՊՀ-շրջանավարտ համագործակցությունը բոլոր ուղղություններով:

Օրակարգի 1-ին հարցը դրվեց քվեարկության:
Քվեարկության արդյունքները՝ **կողմ՝ 18, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:**

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 43-րդ կետի 4-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

գնահատել բավարար «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի՝ 2023 թվականի գործունեության և ռազմավարական ծրագրի կատարման տարեկան հաշվետվությունը:

2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կառուցվածքի հաստատում:
ԵՊՀ ռեկտոր Հ. Հովհաննիսյանը ներկայացրեց ԵՊՀ կառուցվածքը և նշեց, որ այն առանձնացվել է հաստիքացուցակից:

Օրակարգի 2-րդ հարցը դրվեց քվեարկության:
Քվեարկության արդյունքները՝ **կողմ՝ 18, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:**

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 43-րդ կետի 6-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կառուցվածքը:

3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2024 թվականի հաստիքացուցակի հաստատում:

ԵՊՀ ռեկտոր Հ. Հովհաննիսյանը ներկայացրեց ԵՊՀ հաստիքացուցակը՝ նշելով, որ այն նախորդից հաստիքների քանակով էականորեն չի տարբերվում: 2024 թվականի հաստիքացուցակով նախատեսվել է աշխատավարձերի 10 տոկոսի չափով բարձրացում սեպտեմբերի 1-ից:

Օրակարգի 2-րդ հարցը դրվեց քվեարկության:

Քվեարկության արդյունքները՝ **կողմ՝ 18, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:**

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 43-րդ կետի 7-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2024 թվականի հաստիքացուցակը:

4. Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2024 թվականի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի (բյուջե) հաստատում:

ԵՊՀ ռեկտոր Հ. Հովհաննիսյանը ներկայացրեց 2024 թվականի եկամուտների և ծախսերի նախահաշիվը, որը ներառում է ԵՊՀ և Իջևանի մասնաճյուղի եկամուտներն ու ծախսերը: Բյուջեն դեֆիցիտային է, որը կազմում է 400 միլիոն դրամ, բայց նախորդ տարվա համեմատ էականորեն նվազեցվել է դեֆիցիտը՝ չափավոր զսպողական քաղաքականության շնորհիվ: Դեֆիցիտի լրացման աղբյուրը նախորդ տարում ստացված և չծախսված եկամուտների մնացորդն է:

Ըստ բյուջեի նախահաշվի մուտքերի մեծ մասը կազմում են ուսման վարձերը: Նախատեսված է 380 միլիոն դրամի չափով ուսման վարձի փոխհատուցում: Պետական ֆինանսավորման տոկոսը, որը կազմում է ընդհանուր կանխատեսվող եկամտի 38 տոկոսը, գալիք տարում նախատեսվում է, որ կավելանա 11 տոկոսով. դա պայմանավորված է Արցախից բռնի տեղահանված ուսանողների վարձավճարների փոխհատուցման հետ:

Պետական ֆինանսավորումը բաժանվում է երեք մասի.

- կրթական ծրագրերի համար՝ ընդհանուր ֆինանսավորման 48 տոկոսը,
- գիտական ծրագրերի համար՝ ընդհանուր ֆինանսավորման 46 տոկոսը,
- այլ ծրագրերի համար՝ 6 տոկոս, որից 166 միլիոն դրամն ուղղվում է ուսանողների կրթաթոշակների հատկացմանը, իսկ 142 միլիոն դրամը՝ օտարերկրյա պետություններում հայագիտական կենտրոնների պահպանման ծրագրերին:

Պետական ֆինանսավորմամբ սովորող մեկ ուսանողի համար փոխհատուցման գումարը կազմում է 779 հազար դրամ:

Գիտական ծրագրերի բյուջեն կազմում է շուրջ 2.5 միլիարդ դրամ: Ավելացվել են ձեռներեցների կողմից լրացուցիչ գիտակրթական ծրագրերի ֆինանսավորման ծավալները, ինչը կարևոր

ձեռքբերում է, քանի որ կրկնապատկվելու են այս տեսակի գործունեությունից ստացվող գումարները: Այս ուղղությամբ նախատեսվում է 100 տոկոսով ավելացում՝ 153 միլիոն դրամից դառնալով 303 միլիոն դրամ: Այդպիսի ծրագրերից են «DSUI», «Philip Moris Armenia», «Service Titan», «Synopsys Armenia» և այլն:
Նախատեսված է մարզասրահի, ուսանողական հանրակացարանի, հյուրերի տան, Ծաղկաձորի, Բյուրականի ուսումնաարտադրական բազաների կողմից մատուցվող ծառայություններից ստացվող ֆինանսական մուտքերի ավելացում:
2023 թվականի համեմատ 30 տոկոսով ավելանալու է դրամաշնորհներից ստացվող եկամուտը: Եկամուտների ավելացմանը նպաստելու է նաև ավանդներից ստացվող գումարը:
Նախահաշվի ծախսերի 86 տոկոսը կազմում են ընթացիկ ծախսերը, իսկ 14 տոկոսը՝ կապիտալ:
2024 թվականի ծախսերի շուրջ 65 տոկոսը կազմում են աշխատավարձերը, որից 51 տոկոսը պրոֆեսորադասախոսական կազմի աշխատավարձն է, 18 տոկոսը՝ գիտական անձնակազմի, 5 տոկոսը՝ Իջևանի մասնաճյուղի անձնակազմի, 5 տոկոսը՝ դրամաշնորհային ծրագրերի, 21 տոկոսը՝ վարչական, սպասարկող, ուսումնաօժանդակ և տեխնիկական անձնակազմերի:
2024 թվականի բյուջեով ևս նախատեսված է հիմնական աշխատավարձի 50 տոկոսի չափով պարգևավճար ամռանը և տարեվերջյան պարգևավճար՝ 100 տոկոսի չափով:
210 միլիոն դրամ նախատեսված է ներքին դրամաշնորհների հատկացման համար, ծրագրային հավատարմագրման համար՝ 23 միլիոն դրամ, կրթագիտական գործունեությունը բարելավելու, լաբորատորիաները վերազինելու համար՝ 570 միլիոն դրամ, 60 միլիոն դրամ՝ խելացի գրատախտակների և լաբորատոր սարքավորումների ձեռքբերման, 150 միլիոն դրամ՝ կահույքի ձեռքբերման և 115 միլիոն դրամ՝ վերանորոգման ծախսերի համար:
2024 թվականին խոշոր գնումների շրջանակում նախատեսվում է ձեռք բերել վերելակներ, տրանսպորտային միջոցներ, էլեկտրոնային հեռախոսակայան, համակարգչային գույք, նախատեսված են նաև հիմնանորոգման աշխատանքներ Դիլիջանի ուսումնաարտադրական բազայում:

Օրակարգի 4-րդ հարցը դրվեց քվեարկության:
Քվեարկության արդյունքները՝ **կողմ՝ 18, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:**

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 43-րդ կետի 8-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2024 թվականի եկամուտների և ծախսերի (բյուջե) նախահաշիվը:

5. **«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կողմից 100 միլիոն ՀՀ դրամի սահմանաչափը գերազանցող ԵՊՀ կարիքների լաբորատոր սարքերի ձեռքբերում ապրանքի մատակարարման թիվ ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/24-1, կապալային աշխատանքների կատարման թիվ ԵՊՀ-ԲՄԱՃՁԲ-23/1 և վերանորոգման աշխատանքների կատարման գնման թիվ ԵՊՀ-ՀԲՄԱՃՁԲ-23/2 պայմանագրերի հաստատում:**

Օրակարգի 5-րդ հարցը դրվեց քվեարկության:
Քվեարկության արդյունքները՝ **կողմ՝ 17, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1:**

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 43-րդ կետի 20-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար լաբորատոր սարքերի ձեռքբերում ապրանքի մատակարարման թիվ ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/24-1 պայմանագիրը,
2. հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար կապալային աշխատանքների կատարման թիվ ԵՊՀ-ԲՄԱՇՁԲ-23/1 պայմանագիրը,
3. հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար վերանորոգման աշխատանքների կատարման գնման թիվ ԵՊՀ-ՀԲՄԱՇՁԲ-23/2 պայմանագիրը:

Նիստի ժամանակ Խորհրդի նախագահը հանձնարարեց 2024 թվականին կազմակերպել Իջևանի մասնաճյուղի տնօրենի թափուր պաշտոնի համալրման մրցույթ:

Խորհրդի նախագահ՝ **Ս. Պապիկյան**

Նիստի քարտուղար՝ **Ե. Կիրակոսյան**